# «ԳԱՋ» ՓԲԸ

ք.Երևան, Դավիթ Բեկի 87
Հեռ.: +37496666656, էլ.փոստ: levonavetisyan1987@gmail.com

29 հունվարի 2026թ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի՛ պարոն նախարար,

«Գաջ» ՓԲ ընկերությունը 2020 թվականի հունիսի 6-ին ստացել է Գաջահանի գիպսի հանքավայրի ՆՇԱԹ-29/621 ընդերքօգտագործման թույլտվությունը:

Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլանով «Գաջ» ՓԲ ընկերությունը նախատեսել է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ արտադրական հրապարակի տարածքում,
4. կուտակված հողաբուսական շերտի ֆիզիկա-ագրոքիմիական հատկությունների ուսումնասիրություն:

2025 թվականի ընթացքում «Գաջ» ՓԲ ընկերության կողմից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ չեն կատարվել, ինչի հետ կապված եռամսյակը մեկ անգամ դիտարկվել է միայն հանքի տարածքում փոշու ֆոնային կոնցենտրացիան :

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Գաջ» ՓԲԸ
տնօրեն՝ Ա. Ենգոյան

«ԳԱՋ» «ГАДЖ» «GAJ» 00802543

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № Ա-1118
29 01 2026 թ.

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
## ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկում-ների վայրը | Ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականու-թյունը | Միջինացված արդյունքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ | Բացահանք | Անօրգանական փոշի ($SiO_2$ 20-70% ) | Չափում ավտոմատ սարքով | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 0.11մգ/մ$^3$ |
| Մակերևութային ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Ստորգետնյա ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Հողային ծածկույթ | Արտադրական հրապարակի տարածք | Նավթա-մթերքներ | Դիտարկում, նմուշարկում | 2025 թվականի ընթացքում մեկ անգամ | 2025 թվականին արտադրական հրապարակի հողերի մշտա-դիտարկում չի կատարվել, քանի որ արդյունա-հանման աշխատանքներ չեն իրականացվել |
| | Հողաբուսական շերտի լցակույտ | Քիմիական և ֆիզիկաքի-միական հատկություն-ներ | Նմուշարկում, լաբորատոր հետազոտություն | 2025 թվականի ընթացքում մեկ անգամ | |
| Վայրի բնություն, կենսա-միջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Նախատեսված չէ | | | | |
| Աղմուկ և թրթռում | Նախատեսված չէ | | | | |
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ | | | | |
| Վառելանյութերի պահեստարաններ | Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան | | | | |

Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից փոշու ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց-վածքներ | Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան | | | | |
| Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում | | | | |